

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

### ԵՂՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2015թ. ապրիլի 8-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 28-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Է. Շաթիրյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցի քննարկմանը (օրակարգը կցվում է):

#### ՕՐԱԿԱՐԳ.

1. *Գիտական կոչման շնորհում:*
2. *Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Վաղարշյան):*
3. *Ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի նոր ուսումնական պլանների հաստատում:*
4. *Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վիճակի մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):*
5. *«Բանբեր» Երևանի համալսարանի իրավագիտություն շարքի և «Պետություն և իրավունք» հանդեսի խմբագիրների հաղորդումները կատարված աշխատանքների մասին (զեկ.՝ պրոֆ. Ա. Գաբուզյան, պրոֆ. Ս. Դիլբանդյան):*
6. *Ընթացիկ հարցեր:*

1. **ԼՍԵՑԻՆ.** ԵՂՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը սահմանադրական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Անահիտ Մանասյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Ս. Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Անահիտ Մանասյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

Արտահայտվեցին նաև Գ. Ղազինյանը, Ն. Այվազյանը և Է. Շաթիրյանը:

Գիտական խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի ապիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Անահիտ Մանասյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

**2. ԼՄԵՑԻՆ.** Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Վաղարշյան):

Զեկուցողը համակարգված տեսքով ներկայացրեց տեղեկատվություն ամբիոնի կողմից կատարված ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների, այդ թվում՝ դասավանդման մեթոդաբանության, գիտելիքների ստուգման և գնահատման ձևերի, կառուցակարգերի կատարելագործման, ուսումնական և ուսումնասօժանդակ նյութերի արդիականացման, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքի, այդ թվում՝ ամբիոնի անդամների հրատարակումների, գիտաժողովներին և գիտահետազոտական ծրագրերին նրանց մասնակցության վերաբերյալ:

Անդրադարձ կատարվեց նաև ամբիոնի՝ ուսանողների հետ տարվող աշխատանքներին, կադրերի պատրաստման հարցերին, ինչպես նաև ամբիոնի աշխատանքում արձանագրված որոշ թերություններին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Գ. Ղազինյանը և Ն. Այվազյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հաշվետվությունը գնահատել դրական:

Հաշվետվությունը կցվում է արձանագրությանը:

**3. ԼՄԵՑԻՆ.** Ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի նոր ուսումնական պլանների հաստատման հարցը (զեկ.՝ պրոֆ. Հ. Խաչիկյան):

Զեկուցողը տեղեկացրեց, որ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի նոր ուսումնական պլաններում էական փոփոխություններ չեն նախատեսվում: Տեղեկացվեց, որ <Գործարարական իրավունք> և <Սահմանադրական իրավունք> մագիստրոսական ծրագրերը ֆակուլտետի մագիստրատուրայի նոր ուսումնական պլաններում չեն ներառվելու:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Օրակարգի հարցի հետ կապված, խորհրդի նախագահ, պրոֆ. Գ. Ղազինյանը կրկին անգամ անդրադարձավ ֆակուլտետի մագիստրատուրայում ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման հարցին՝ արձանագրելով ֆակուլտետի մագիստրատուրայում դասավանդվող դասընթացների բովանդակության, առանձին դասընթացների դասավանդման մեթոդաբանության, մագիստրատուրայում ուսումնառության ժամկետի տևողության վերաբերյալ առաջարկությունների ներկայացման հարցում ֆակուլտետի ամբիոնների ոչ ակտիվ նախաձեռնողականությունը:

Արտահայտվեցին նաև Ա. Վաղարշյանը, Գ. Դանիելյանը, Ն. Այվազյանը և Ս. Դիլբանդյանը:

**3.1. ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ֆակուլտետի բակալավրիատի նոր ուսումնական պլանում <Շրջակա միջավայրի իրավունք> դասընթացի վերտառությունը փոփոխելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, դոց. Ս. Մեղրյանը ներկայացրեց ամբիոնի միջնորդությունը, որով առաջարկվում է ֆակուլտետի բակալավրիատի նոր ուսումնական պլանում <Շրջակա միջավայրի իրավունք> դասընթացի վերտառությունը փոխարինել <ՀՀ էկոլոգիական իրավունք> վերտառությամբ:

Առաջարկվեց համապատասխան փոփոխություն կատարել նաև ֆակուլտետի հեռակա ուսուցման բաժնի ուսումնական պլանում:

Արտահայտվեցին նաև Ա. Իսկոյանը և Գ. Ղազինյանը:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի ուսումնական պլաններում առաջարկվող վերոնշյալ փոփոխությունները:

**Բ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**3.2. ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը <Քաղաքացիական իրավունք և դատավարություն> մագիստրոսական ծրագրի նոր ուսումնական պլանում փոփոխություն կատարելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, դոց. Ս. Մեղրյանը ներկայացրեց ամբիոնի միջնորդությունը, որով առաջարկվում է <Քաղաքացիական իրավունք և դատավարություն> մագիստրոսական ծրագրի նոր ուսումնական պլանում <Օտարերկրյա դատարանների և արբիտրաժների դատական ակտերի ճանաչումը և կատարումը Հայաստանի Հանրապետությունում> վերտառությամբ դասընթացը փոխարինել <Միջազգային քաղաքացիական դատավարություն> վերտառությամբ դասընթացով:

Առաջարկվեց համապատասխան փոփոխություն կատարել նաև ֆակուլտետի հեռակա ուսուցման բաժնի ուսումնական պլանում:

Արտահայտվեցին նաև Ս. Դիլբանդյանը և Գ. Ղազինյանը:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել <Քաղաքացիական իրավունք և դատավարություն> մագիստրոսական ծրագրի ուսումնական պլաններում առաջարկվող վերոնշյալ փոփոխությունները:

**Բ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի

խորհրդի սույն որոշումը:

**4. ԼՍԵՑԻՆ. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վիճակի մասին հարցը (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):**

Ֆակուլտետի ամբիոնների վարիչները տեղեկացրեցին, որ առկա ուսուցման բաժնում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վիճակն ընդհանուր առմամբ բարվոք է: Տեղեկացվեց, որ ֆակուլտետի քաղաքացիական դատավարության և քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնների գծով առկա են մեկական խնդրահարույց ավարտական աշխատանքներ, իսկ քրեական իրավունքի ամբիոնի գծով՝ մեկ մագիստրոսական թեզ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Խորհրդի նախագահ, պրոֆ. Գ. Ղազինյանն, անդրադառնալով ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի որակի հարցին, ամբիոնների վարիչներին հանձնարարեց հետևողականություն դրսևորել որակյալ աշխատանքների ներկայացման հարցում:

Արտահայտվեցին նաև Հ. Խաչիկյանը, Ա. Հայկյանը և Կ. Գևորգյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումներն ընդունել ի գիտություն:

**5. ԼՍԵՑԻՆ. «Բանբեր» Երևանի համալսարանի իրավագիտություն շարքի և <Պետություն և իրավունք> հանդեսի խմբագիրների հաղորդումները կատարված աշխատանքների մասին (զեկ.՝ պրոֆ. Ա. Գաբուզյան, պրոֆ. Ս. Դիլբանդյան):**

«Բանբեր» Երևանի համալսարանի իրավագիտություն շարքի խմբագիր, պրոֆ. Ա. Գաբուզյանը, ներկայացնելով կատարված աշխատանքի արդյունքները, հորդորեց ֆակուլտետի ամբիոններին նախաձեռնողականություն դրսևորել «Բանբեր»-ում գիտական հոդվածների տպագրության ներկայացման հարցում:

Կատարված աշխատանքի մասին ամփոփ հաղորդում ներկայացրեց <Պետություն և իրավունք> հանդեսի խմբագիր, պրոֆ. Ս. Դիլբանդյանը՝ նշելով, որ խմբագրական խորհրդի աշխատանքների կազմակերպման հետ կապված առկա են հրատապ կարգով լուծում պահանջող որոշ խնդիրներ: Անդրադարձ կատարվեց գործնական կարևորություն ունեցող հիմնախնդիրների վերաբերյալ գիտական հոդվածների ներկայացման հարցին:

Խմբագիրները նպատակահարմար համարեցին հրատարակության ներկայացնել նաև մենագրությունների և ատենախոսությունների վերաբերյալ գրախոսականները:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Խորհրդի նախագահ, պրոֆ. Գ. Ղազինյանն առաջարկեց փոփոխություն կատարել <Պետություն և իրավունք> հանդեսի խմբագրական խորհրդի կազմում՝ պատասխանատու քարտուղար Դ. Մելքոնյանի փոխարեն դրա կազմում ընդգրկելով Ա. Պետրոսյանին: Առաջարկն արժանացավ ներկաների հավանությանը:

Արտահայտվեց նաև Տ. Բարսեղյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաղորդումներն ընդունել ի գիտություն:

**Բ.** <Պետություն և իրավունք> հանդեսի խմբագրական խորհրդի կազմում պատասխանատու քարտուղար Դ. Մելքոնյանի փոխարեն ընդգրկել Ա. Պետրոսյանին:

**6. ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ**

**6.1. ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մարիամ Այվազյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Վ. Ավետիսյանը և Տ. Բարսեղյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մարիամ Այվազյանի՝ «Ստեղծագործության կատարումների իրավական պահպանության հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)»:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Տ. Բարսեղյանին:

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**6.2. ԼՍԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Հասմիկ Սարգսյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Գ. Դանիելյանը և Ն. Այվազյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Հասմիկ Սարգսյանի՝ «Վարչական ակտերի հարկադիր կատարման հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Ռ. Եղյանին:

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**6.3. ԼՄԵՑԻՆ.** Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Քրիստինա Խաչատրյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ա. Գաբուզյանը և Ն. Խաչիկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել ամբիոնի հայցորդ Քրիստինա Խաչատրյանի՝ «Եվրոպական պենիտենցիար չափանիշները և Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսդրությունը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05-«Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ն. Խաչիկյանին:

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**6.4. ԼՄԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկ. Գևորգ Վոլոդյայի Պետրոսյանին ԺԲ.00.03-«Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու թույլտվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու հարցով:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ս. Մեղրյանը և Վ. Հովհաննիսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Գևորգ Վոլոդյայի Պետրոսյանն ունի 32 հրատարակված գիտական աշխատանքներ՝ դիմել ԵՊՀ ռեկտորատին՝ միջնորդել ՀՀ ԲՈՀ-ին թույլատրել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ Գևորգ Վոլոդյայի Պետրոսյանին ղեկավարել թեկնածուական ատենախոսություններ՝ ԺԲ.00.03-«Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ:

*Խորհրդի նախագահ*

*Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար*

*Է. Շաթիրյան*